ՀՀ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսված կրթության բնագավառի ծախսերը կազմում են 122175.8 մլն դրամ: Ծախսերը ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ (այսուհետ՝ 2013 թվականի) աճել են 14019.0 մլն դրամով կամ 13.0 տոկոսով, այդ թվում՝ պետական կառավարման մարմինների պահպանման ծախսերն աճել են 176.9 մլն դրամով (նախարարի աշխատակազմում աշխատում են թվով 15, նախարարության աշխատակազմում թվով 203 աշխատողներ):

Նախագծով ծախսերի աճը 2013 թվականի նկատմամբ հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի բարձրացման, կոմունալ ծախսերի գծով լրացուցիչ միջոցների նախատեսմամբ, ինչպես նաև սովորողների թվաքանակների փոփոխությամբ: Ոլորտի աշխատողների աշխատավարձերը հաշվարկվել են, հիմք ընդունելով ***2014 թվականի հուլիսի 1-ից*** հանրապետությունում սպասվող աշխատավարձերի բարձրացումը. հանրակրթական, հատուկ, մասնագիտացված հանրակրթական հաստատությունների մանկավարժական անձնակազմի աշխատավարձերի մասով ուղենիշ է հանդիսացել ՀՀ քաղաքացիական ծառայության առաջատար խմբի 3-րդ ենթախմբի պաշտոն զբաղեցնողների աշխատավարձի չափը՝ 152.1 հազար դրամը: Ոլորտի կազմակերպությունների (բացառությամբ վերոնշված հաստատությունների մանկավարժական անձնակազմի) վարչական և մանկավարժական աշխատողների, հաշվապահների աշխատավարձերի մասով ուղենիշ է հանդիսացել ՀՀ քաղաքացիական ծառայության կրտսեր խմբի 1-ին ենթախմբի պաշտոն զբաղեցնողների աշխատավարձի չափը՝ 132.3 հազար դրամը, իսկ ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի աշխատավարձերի մասով ուղենիշ է հանդիսացել ՀՀ քաղաքացիական ծառայության համակարգի աշխատակիցների սկզբնական աշխատավարձը՝ 2014 թվականի համար հանրապետությունում սահմանվող բազային (նվազագույն, ներառյալ եկամտային հարկը) աշխատավարձի 1.15 գործակիցը, այն է՝ 76.1 հազ.դրամը: Բուհերում աշխատողների աշխատավարձերի մասով ուղենիշ է հանդիսացել 2014 թվականի համար հանրապետությունում սահմանվող բազային (նվազագույն) աշխատավարձի նկատմամբ 1.0 գործակիցը (66.1 հազար դրամ)՝ պայմանավորված բուհերի կողմից իրականացվող մեծածավալ վճարովի ծառայությունների առկայությամբ: Իսկ ***2014 թվականի առաջին կիսամյակի*** համար հիմք է ընդունվել 2013 թվականի հուլիսից հանրապետությունում սահմանված նվազագույն ամսական աշխատավարձը (ներառյալ եկամտային հարկը), այն է՝ 59.5 հազար դրամը :

Կրթության ոլորտի ծախսերի հիմնական մասը կուղղվի **հանրակրթության ոլորտին**, որի գծով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 72001.5 մլն դրամ: Ծախսերի

աճը 2013 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմել է 5084.8 մլն դրամ կամ 7.6 տոկոս:

Նախագծով 2014 թվականի համար ծրագրվող բյուջետային ծախսերի աճը 2013 թվականի նկատմամբ պայմանավորված է հետևյալով.

ա) աշխատավարձերի գծով ծախսերն աճել են 4394.7 մլն դրամով, պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ,

բ) ջեռուցման և էներգետիկ ծառայությունների գծով ծախսերն աճել են, համապատասխանաբար՝ 502.5 և 120.2 մլն դրամով՝ պայմանավորված սակագների փոփոխությամբ: Մասնավորապես. սեփական կաթսայատների միջոցով և գազի վառարաններով ջեռուցման կազմակերպման ծախսերի հաշվարկներում գազի սակագինը մինչև 10.0 հազ. խոր.մ ծախսի դեպքում նախատեսվել է 156 դրամ՝ 2013 թվականի 132 դրամի դիմաց, իսկ 10.0 հազ.խոր.մ-ից բարձր ծախսի դեպքում՝ 276.98 դոլար՝ 2013 թվականի 243.13 դոլարի դիմաց (2014 թվականի համար 1 դոլարի փոխարժեքը նախատեսվել է 406.76 դրամ՝ 2013 թվականի 405.52 դրամի դիմաց): Էներգետիկ ծառայությունների գծով (ներառյալ էլեկտրական ջեռուցիչներով ջեռուցումը) ծախսերի հաշվարկներում 1 կվտ/ժ-ն հաշվարկվել է 38 դրամով՝ 2013 թվականի 30 դրամի դիմաց:

Աշխատավարձերի գծով ծախսերում հաշվի են առնվել ինչպես աշխատավարձերի բարձրացումները, այնպես էլ սովորողների թվաքանակների փոփոխությունները: Նախագծով ծախսերը հաշվարկվել են 359.8 հազար աշակերտի ուսուցման գծով՝ 2013 թվականի 359.7 հազարի դիմաց կամ՝ աշակերտների թվի ավելացումը կազմում է 0.1 հազար: Ընդ որում, հաշվարկներում նախադպրոցական կրթության մեջ ընդգրկվածների թվաքանակը նախատեսվել է 4.6 հազար՝ 2013 թվականի 2.7 հազարի դիմաց, կամ՝ 1.9 հազարով ավել, իսկ դպրոցներում ընդգրկվածների թվաքանակը նախատեսվել է 355.2 հազար՝ 2013 թվականի 357.0 հազարի դիմաց, կամ՝ 1.8 հազարով պակաս: Միաժամանակ, «Հանրակրթական ուսուցում» ծրագրով միջոցներ են նախատեսվել Տավուշի մարզի 14 հանրակրթական դպրոցներում ներառական կրթության մեջ ընդգրկված 335 երեխաների ուսուցման գծով՝ փորձնական կարգի իրականացման հետ կապված:

Հանրակրթության գծով ծախսերի հաշվարկներում աշակերտ/ ուսուցչական դրույք և աշակերտ/ ոչ ուսուցչական դրույք հարաբերակցությունները նախատեսվել են, համապատաս-խանաբար՝ 14.4 և 24.1:

Աշխատավարձերի բարձրացման արդյունքում մանկավարժական անձնակազմի ***(25004.8 դրույք՝ ներառյալ զինղեկների, ֆիզղեկների և մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպիչների դրույքները)*** միջին ամսական հաշվարկային աշխատավարձը մեկ դրույքի հաշվով, ներառյալ լրացուցիչ վարձատրությունները, կկազմի 146.8 հազար դրամ՝ 2013 թվականի 140.4 հազար դրամի դիմաց, վարչական 3812.8 դրույքների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը՝ 210.0 հազար դրամ, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի 9864.8

դրույքների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը՝ 68.0 հազար դրամ՝ 2013 թվականի 46.6 հազար դրամի դիմաց:

Հանրապետության բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը կիրականացվի ըստ աշակերտների թվի՝ հետևյալ բանաձևով.

Ըգ = Սթ x Սգ + Պգ,

որտեղ՝

Ըգ-ն մեկ տարվա համար հաստատությանը հատկացվող ընդամենը գումարն է,

Սթ-ն՝ հաստատության սովորողների թիվը,

Սգ-ն՝ մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը, որը 2014 թվականին կազմում է 121097 դրամ՝ 2013 թվականի 111235 դրամի դիմաց,

Պգ-ն՝ հաստատության պահպանման ծախսերի նվազագույն գումարը, որը 2014 թվականին կազմում է 18090.0 հազար դրամ՝ 2013 թվականի 16876.0 հազար դրամի դիմաց:

Հաշվարկը կատարելիս՝ կիրառվում են գործակիցներ հանրակրթական դպրոցի տարրական, միջին և ավագ մակարդակների համար, մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը բազմապատկելով՝ տարրական մակարդակի համար՝ 0.802 գործակցով, միջին մակարդակի համար՝ 1.114 գործակցով, ավագ մակարդակի համար՝ 1.154 գործակցով: Միաժամանակ, կիրառվում են լրացուցիչ գործակիցներ բարձր լեռնային, լեռնային բնակավայրերի և միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող, ինչպես նաև ավագ դպրոցների համար, մեկ սովորողին ընկնող տարեկան գումարը բազմապատկելով բարձր լեռնային բնակավայրերի դպրոցների համար՝ 1.12 գործակցով, լեռնային բնակավայրերի դպրոցների համար՝ 1.04 գործակցով, միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 1.2 գործակցով, ավագ դպրոցների համար՝ 1.11 գործակցով :

Ընդ որում, բանաձևի կիրառման արդյունքում, հանրակրթական հաստատություններին հատկացվող բյուջետային ծախսերի համաչափությունն ապահովելու նպատակով, թույլատրվում է պետական կառավարման մարմիններին, ՀՀ կառավարության սահմանած կարգով, սահմանափակ գումարի չափով իրենց ենթակայության հաստատությունների ծախսերում կատարել վերաբաշխումներ:

Նախագծով միջոցներ են նախատեսվել հանրապետության բոլոր մարզերում ավագ նախադպրոցական տարիքի 4.6 հազար երեխաների կրթության գծով (2013 թվականին նախադպրոցական կրթության գծով միջոցները նախատեսվել էին 9 մարզերի 2.7 հազար երեխաների հաշվով): Նախադպրոցական կրթության գծով ծախսերը հաշվարկվել են, ելնելով ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևով մեկ սովորողին ընկնող տարեկան գումարի չափից՝ վերջինիս նկատմամբ կիրառելով տարրական մակարդակի համար հաշվարկված գործակիցը, ինչպես նաև բարձր լեռնային, լեռնային բնակավայրերի և միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ

ունեցող դպրոցների համար նախատեսված լրացուցիչ գործակիցները:

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման համաձայն՝ նախադպրոցական կրթության գծով ծախսերը նախատեսվել են «01. Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն» խմբի «01. Նախադպրոցական կրթություն» դասում 518.9 մլն դրամի չափով, իսկ հանրակրթության գծով ծախսերը նախատեսվել են «01. Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն» խմբի «02. Տարրական ընդհանուր կրթություն» դասում 24355.5 մլն դրամի չափով, ինչպես նաև «02. Միջնակարգ ընդհանուր կրթություն» խմբի «01. Հիմնական ընդհանուր կրթություն» և «02. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն» դասերում, համապատասխանաբար՝ 29917.5 և 17209.6 մլն դրամի չափով:

Հատուկ կրթության բնագավառում կարևորվում է ներառական դպրոցների ցանցի զարգացումը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ հանրակրթական դպրոցում կրթության կազմակերպումը:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով «Ներառական կրթություն» ծրագրի գծով նախատեսվել է 1666.0 մլն դրամ՝ հանրապետության 101 հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող շուրջ 3.0 հազար երեխաների ուսուցման կազմակերպման գծով (2013 թվականին ներառական կրթություն իրականացվել է 80 հանրակրթական դպրոցներում, որտեղ ընդգրկված են եղել 2.4 հազար երեխաներ): Ծախսերի աճը 2013 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմել է 455.1 մլն դրամ կամ 37.6 տոկոս՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացման գծով լրացուցիչ միջոցների նախատեսմամբ, ինչպես նաև հիմնարկների թվի՝ 21-ով և երեխաների թվաքանակի՝ 0.6 հազարով ավելացման հետ կապված ծախսերի աճով:

Հաշվարկներում աշխատավարձերի գծով ծախսերն աճել են 336.3 մլն դրամով, սննդամթերքի ձեռքբերման գծով ծախսերը՝ 90.7 մլն դրամով, տրանսպորտային ծախսերը՝ 21.6 մլն դրամով, մնացած ծախսերը՝ 6.5 մլն դրամով:

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման համաձայն՝ ներառական կրթության գծով ծախսերը նախատեսվել են «01. Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն» խմբի «02. Տարրական ընդհանուր կրթություն» դասում՝ 781.0 մլն դրամի չափով, ինչպես նաև «02. Միջնակարգ ընդհանուր կրթություն» խմբի «01. Հիմնական ընդհանուր կրթություն» և «02. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն» դասերում, համապատասխանաբար՝ 792.6 և 92.4 մլն դրամի չափով:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով հատուկ կրթության և մասնագիտացված հանրակրթական ուսուցման գծով նախատեսվել է 5304.6 մլն դրամ: ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ ծախսերն աճել են 553.5 մլն դրամով կամ 11.7 տոկոսով:

Նախագծով միջոցները նախատեսվել են 30 հատուկ և մասնագիտացված հանրակրթական դպրոցներում 4.8 հազար սաների ուսուցման կազմակերպման գծով՝ 2013 թվականի 4.9 հազար դիմաց: ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 28-ի N174-Ն որոշմամբ ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության «Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտության առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ն անցել է ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությանը և նշված ՊՈԱԿ-ի գծով ծախսերը նախատեսվել են ՀՀ կրթության և գիտության նախարարությանը:

Նախագծով 2014 թվականի համար ծրագրվող բյուջետային ծախսերի աճը 2013 թվականի համապատասխան ցուցանիշի նկատմամբ պայմանավորված է հետևյալով.

աշխատավարձերի գծով ծախսերն աճել են 487.0 մլն դրամով՝ պայմանավորված աշխատավարձերի բարձրացմամբ, մնացած ծախսերն ավելացել են 66.5 մլն դրամով:

Աշխատավարձերի բարձրացման արդյունքում մանկավարժական 1399.3 դրույքների (ներառյալ զինղեկների, ֆիզղեկների և մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպիչների դրույքները) միջին ամսական հաշվարկային աշխատավարձը մեկ դրույքի հաշվով, ներառյալ լրացուցիչ վարձատրությունները, կկազմի 143.6 հազար դրամ՝ 2013 թվականի 135.3 հազար դրամի դիմաց, վարչական 114.5 դրույքներինը՝ 189.0 հազար դրամ, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի 1300.3 դրույքներինը՝ 69.8 հազար դրամ՝ 2013 թվականի 48.9 հազար դրամի դիմաց:

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման համաձայն՝ հատուկ կրթության և մասնագիտացված հանրակրթական ուսուցման գծով ծախսերը նախատեսվել են «01. Նախադպրոցական և տարրական ընդհանուր կրթություն» խմբի «02. Տարրական ընդհանուր կրթություն» դասում՝ 1170.5 մլն դրամի չափով, ինչպես նաև «02. Միջնակարգ ընդհանուր կրթություն» խմբի «01. Հիմնական ընդհանուր կրթություն» և «02. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն» դասերում, համապատասխանաբար՝ 2270.8 և 1863.3 մլն դրամի չափով:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով ***«Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն»*** դասի գծով նախատեսվել է 2854.3 մլն դրամ, որը ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ աճել է 292.2 մլն դրամով կամ 11.4 տոկոսով՝ պայմանավորված ինչպես աշխատավարձերի բարձրացմամբ, այնպես էլ սովորողների թվաքանակի 264-ով ավելացմամբ և սակագների փոփոխություններով:

Նախագծով ծախսերը նախատեսվել են հանրապետության 25 արհեստագործական ուսումնարաններում արհեստագործական կրթության մեջ ընդգրկված 7885 սովորողների ուսուցման գծով՝ 2013 թվականի 7621-ի դիմաց: Սովորողների թվաքանակի ավելացումը պայմանավորված է ՄԿՈՒԻ ոլորտում իրականացվող բարեփոխումների ծրագրով, համաձայն որի 2012 թվականին՝ 2011 թվականի համեմատ, ընդունելության անվճար ուսուցման տեղերը նախատեսվել են 50% աճով (3877 տեղ՝ 2011 թվականի 2585-ի դիմաց): Ընդունելության գծով նշված 3877 տեղերը նախատեսվել են

նախագծի հաշվարկներում:

Նախագծի հաշվարկներում աշխատավարձերի գծով ծախսերն աճել են 267.6 մլն դրամով: Աշխատավարձերի բարձրացման արդյունքում նախնական մասնագիտական (արհեստագործական) հաստատությունների (առանց ուժայինների) մանկավարժական 962.1 դրույքների ***(ներառյալ զինղեկների, ֆիզղեկների և մանկապատանեկան կոլեկտիվի կազմակերպիչների դրույքները)*** միջին ամսական հաշվարկային աշխատավարձը մեկ դրույքի հաշվով, ներառյալ լրացուցիչ վարձատրությունները, կկազմի 128.9 հազար դրամ՝ 2013 թվականի 125.5 հազար դրամի դիմաց, վարչական 66.5 դրույքներինը՝ 182.4 հազար դրամ, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի 634.3 դրույքներինը՝ 67.8 հազար դրամ՝ 2013 թվականի 46.3 հազար դրամի դիմաց:

Մնացած ծախսերն աճել են 24.6 մլն դրամով, որից 14.7 մլն դրամը՝ կրթաթոշակի ֆոնդի գծով, 9.9 մլն դրամը՝ կոմունալ ծախսերի գծով, հիմնականում պայմանավորված սակագների փոփոխություններով:

«Միջին մասնագիտական կրթություն» դասի գծով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 5843.9 մլն դրամ: Աճը ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ կազմում է 2002.2 մլն դրամ կամ 52.1 տոկոս՝ պայմանավորված սովորողների թվաքանակի 2743-ով ավելացմամբ և աշխատավարձերի բարձրացման գծով լրացուցիչ միջոցների նախատեսմամբ:

Նախագծով ծախսերը նախատեսվել են միջին մասնագիտական կրթության մեջ ընդգրկված 12375 սովորողների ուսուցման գծով՝ 2013 թվականի 9632-ի դիմաց: Սովորողների թվաքանակի ավելացումը պայմանավորված է ՄԿՈՒԻ ոլորտում իրականացվող բարեփոխումների ծրագրով, համաձայն որի 2012 թվականին՝ 2011 թվականի համեմատ, ընդունելության անվճար ուսուցման տեղերը նախատեսվել են 50% աճով (3777 տեղ՝ 2011 թվականի 2518-ի դիմաց): Ընդունելության գծով նշված 3777 տեղերը նախատեսվել են նախագծի հաշվարկներում: Միաժամանակ, 2014 թվականի սեպտեմբերից, համընդհանուր 12-ամյա կրթության անցմամբ պայմանավորված (2014 թվականից նախատեսվում է 12-ամյա կրթությունը (ներառյալ մասնագիտականը) դարձնել անվճար՝ համաձայն ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 18-ի N730-Ա որոշմամբ հաստատված ծրագրի) 2014 թվականին ընդունելության տեղերն ավելացվել են ևս 4527-ով: Միաժամանակ, ՀՀ կառավարության 2013 թվականի հունվարի 16-ի N83-Ն որոշման համաձայն՝ ՀՀ առողջապահության նախարարության ենթակայության քոլեջներն անցել են ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությանը և վերակազմակերպված քոլեջների գծով ծախսերը նախատեսվել են ՀՀ կրթության և գիտության նախարարությանը:

Նախագծի հաշվարկներում աշխատավարձերի գծով ծախսերն աճել են 1837.2 մլն դրամով, որից 329.7 մլն դրամը՝ համընդհանուր 12-ամյա կրթության անցման հետ կապված:

Կրթաթոշակի ֆոնդը գծով ծախսերն աճել են 108.5 մլն դրամով (որից 60.2 մլն դրամը՝

համընդհանուր 12-ամյա կրթության անցման հետ կապված), սննդամթերքի ձեռքբերման գծով ծախսերը՝ 20.1 մլն դրամով: Կոմունալ ծախսերը, սակագների փոփոխությամբ և սովորողների թվաքանակի ավելացմամբ պայմանավորված, աճել են 48.2 մլն դրամով:

Աշխատավարձերի բարձրացման արդյունքում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (առանց ուժայինների) մանկավարժական անձնակազմի միջին ամսական հաշվարկային աշխատավարձը կկազմի 103.3 հազար դրամ՝ 2013 թվականի 74.6 հազար դրամի դիմաց, վարչական անձնակազմինը՝ 103.0 հազար դրամ՝ 2013 թվականի 71.4 հազար դրամի դիմաց, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմինը՝ 68.5 հազար դրամ՝ 2013 թվականի 48.8 հազար դրամի դիմաց:

Բարձրագույն կրթության գծով ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվել է 9714.3 մլն դրամ, որը ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ աճել է 1705.5 մլն դրամով կամ 21.3 տոկոսով, չնայած ուսանողների թվաքանակի 0.7 հազարով նվազմանը (Նախագծի հաշվարկներում ծախսերը հաշվարկվել են 12.7 հազար ուսանողի հաշվով՝ 2013 թվականի 13.4 հազարի դիմաց): Նախագծով բուհական կրթության գծով հաշվարկներում (առանց արտոնություն ունեցող ուսանողների վարձավճարի փոխհատուցման գծով ծախսերի) մեկ ուսանողի գծով ծախսը կհասցվի 561.7 հազար դրամի՝ 2013 թվականի 406.5 հազար դրամի դիմաց:

ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1323-Ն որոշման համաձայն՝ 2013 թվականի սեպտեմբերի 1-ից պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում կտրամադրի յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված ուսանողի միջին որակական գնահատականի նվազագույն շեմը հաղթահարած և ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ընտանիքների անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 50-ից 100 տոկոսի չափով: Նշվածով պայմանավորված՝ Նախագծով ՀՀ կրթության և գիտության նախարարությանը «Բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների տրամադրում» ծրագրով նախատեսվել է 421.1 մլն դրամ՝ 2013 թվականի 90.9 մլն դրամի դիմաց կամ՝ ծախսերի աճը կազմել է 330.2 մլն դրամ (ծախսերը հաշվարկվել են 1000 հոգու հաշվով՝ 12 ամսվա կտրվածքով, 500 հոգու հաշվով՝ 4 ամսվա կտրվածքով):

Նախագծի հաշվարկներում աշխատավարձերի գծով ծախսերը, ընդհանուր առմամբ, աճել են 1307.2 մլն դրամով, ընդ որում, աշխատավարձերի բարձրացման և եկամտահարկի գծով լրացուցիչ միջոցների նախատեսմամբ պայմանավորված՝ ծախսերի աճը կազմել է 1420.7 մլն դրամ: Նշված գումարի մեջ 28,3 մլն դրամը կազմում է Հերացու անվան բժշկական համալսարանի

ռազմաբժշկական ֆակուլտետի աշխատողների գծով եկամտային հարկը, իսկ մնացած գումարը՝ 1382.2 մլն դրամի չափով, պայմանավորված է աշխատավարձերի բարձրացմամբ:

Ուսանողների թվաքանակի՝ 0.7 հազարով նվազմամբ պայմանավորված, աշխատավարձերի գծով ծախսերի պակասեցումը կազմել է 112.2 մլն դրամ:

Կրթաթոշակի ֆոնդի գծով ծախսերի աճը կազմում է 6.1 մլն դրամ, ընդ որում, 165 օրդինատորների կրթաթոշակի ֆոնդի գծով ծախսերի աճը կազմել է 24.7 մլն դրամ, միաժամանակ, ուսանողների թվաքանակի նվազման արդյունքում՝ կրթաթոշակի ֆոնդը պակասել է 18.6 մլն դրամով:

Կոմունալ ծախսերը, սակագների փոփոխությամբ պայմանավորված, աճել են 49.1 մլն դրամով:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով ***«Արտադպրոցական դաստիարակություն»*** դասի գծով նախատեսվել է 3662.6 մլն դրամ, որը ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ աճել է 933.9 մլն դրամով կամ 34.2 տոկոսով: Նախագծով ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի բարձրացման գծով լրացուցիչ միջոցների նախատեսմամբ՝ 1004.4 մլն դրամի չափով:

Նախագծով կոմունալ ծախսերն աճել են 24.1 մլն դրամով, պայմանավորված սակագների փոփոխություններով: Միաժամանակ, Նախագծով գումարներ չեն նախատեսվել 2013 թվականին նախատեսված՝ «Հայաստանի Հանրապետության մանկապատանեկան մարզադպրոցներին, մարզաձևերի ազգային ֆեդերացիաներին և այլ մարզական հասարակական կազմակերպություններին գույքով ապահովում» ծրագրի գծով՝ 100.0 մլն դրամի չափով:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով ***«Լրացուցիչ կրթություն»*** դասի գծով նախատեսվել է 1217.4 մլն դրամ, որը ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի համապատասխան ցուցանիշի նկատմամբ աճել է 88.2 մլն դրամով կամ 7.8 տոկոսով: Աճը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի բարձրացման գծով լրացուցիչ միջոցների նախատեսմամբ, դասախոսական 1 ժամի արժեքի՝ 2760 դրամ նախատեսմամբ՝ 2013 թվականի 2400 դրամի դիմաց, վերապատրաստվողների թվաքանակների փոփոխություններով: Նախագծով 0.3 մլն դրամ է նախատեսվել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերապատրաստման գծով (վերջինս 2013 թվականին նախատեսված չի եղել):

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով զգալի միջոցներ են նախատեսվել ***«Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ»*** դասում ներառված ներքոհիշյալ ծրագրերի գծով, այսպես.

- տարրական դասարանների աշակերտներին անվճար դասագրքերով և ուսումնական գրականությամբ ապահովում ու ավագ դպրոցների դասագրքերի հրատարակում՝ 960.0 մլն դրամ՝ 2013 թվականի 754.0 մլն դրամի դիմաց (աճը 206.0 մլն դրամ է, որն ավագ դպրոցների դասագրքերի գծով է), միաժամանակ, «Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի

վարձավճարների փոխհատուցում» ծրագրով նախատեսվել է 120.0 մլն դրամ:

- դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում՝ 374.2 մլն դրամ՝ 2013 թվականի 237.4 մլն դրամի դիմաց: Նշված ծրագրով ծախսերի աճը՝ 136.8 մլն դրամով, պայմանավորված է երեխաների թվաքանակի՝ 4500-ի չափով նախատեսմամբ՝ 2013 թվականի 3000-ի դիմաց:

- համակարգչային և ինտերնետային կապի ծառայություններ՝ 861.7 մլն դրամ (հաշվարկներում միջոցներ են նախատեսվել հանրապետության դպրոցների ինտերնետային ցանցի սպասարկման և համակարգչային սարքավորումների պահպանման, շարժական ինտերնետային կայանի շահագործման, Մայքրոսոֆթի համակարգչային ծրագրերի արտոնագրման նպատակով):

- ավարտական փաստաթղթերի,գովասանագրերի,դասամատյանների, մեդալների, ծրարների, ուսումնական ծրագրերի, մանկավարժական պարբերականների և ուսումնադիտողական պարագաների ձեռքբերում՝ 327,1 մլն դրամ,

- դպրոցականների սպարտակիադայի և օլիմպիադաների անցկացում, համապատասխանաբար՝ 35.0 և 59.7 մլն դրամ,

- փոխհատուցում ՀՀ հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի պետական հանրակրթական դպրոցների մանկավարժներին՝ 63.2 մլն դրամ,

- կրթության բովանդակային և մեթոդական սպասարկում ու հանրապետության հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստում՝ 502.4 մլն դրամ,

- գնահատման և թեստավորման ծառայություններ՝ 414.1 մլն դրամ (հաշվարկներում միջոցներ են նախատեսվել 2014 թվականին 25.0 հազար շրջանավարտի հաշվով ավարտական քննությունների անցկացման գծով՝ 2013 թվականի 28.1 հազար շրջանավարտի դիմաց: Միաժամանակ, միջոցներ են նախատեսվել TIMSS միջազգային ստուգատեսին ՀՀ մասնակցության վճարի գծով (37,5 հազար դոլարին և 37,5 հազար եվրոյին համարժեք դրամ), 5.3 մլն դրամ էլ նախատեսվել է TIMSS-ի փորձնական փուլի գծով, 2013 թվականին նշված ծախսը նախատեսված չի եղել):

- սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական գրականության և օժանդակ նյութերի մշակում և տրամադրում, ինչպես նաև Ջավախքի դպրոցներին գույքի տրամադրում, համապատասխանաբար, 80.0 մլն և 30.0 մլն դրամ,

- հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցում՝ 55.2 մլն դրամ,

- «Հայ ասպետ» հեռուստամրցաշարի անցկացում՝ 67.5 մլն դրամ, ուսուցիչների ատեստավորման գծով ծախսեր՝ 13.3 մլն դրամ,

- «Դպրոցահասակ երեխաներին սննդով ապահովում»՝ 130.0 մլն դրամ: ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի ռազմավարությունը, դրա իրականացման միջոցառումների ծրագիրը և փորձնական ծրագիրը, որով նախատեսվում է, որ, սկսած 2014 թվականից, ՀՀ կառավարությունն աստիճանաբար կստանձնի ըստ մարզերի ծրագրի

իրականացումը և ՀՀ կառավարության կողմից դպրոցական սննդի համար ՀՀ պետական բյուջեից հատկացվող ֆինանսավորումը 2014-2016 թվականներին կկազմի՝ ընդամենը, 1239.0 մլն դրամ: Փորձնական ծրագիրը կմեկնարկի 2014 թվականի հունվարին ՀՀ Վայոց ձորի մարզում, իսկ սեպտեմբերից ծրագիրը կիրականացվի նաև ՀՀ Սյունիքի մարզում: Միաժամանակ, կշարունակվի ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից տրամադրվող համաֆինանսավորումը, որը կկազմի շուրջ 10.0 մլն ԱՄՆ դոլար, որի շրջանակներում դպրոցական սննդի ծրագրում կընդգրկվեն հանրապետության մնացած մարզերի 800 դպրոցների տարրական դասարանների և դպրոցին նախապատրաստման խմբերում (նախակրթարաններում) ընդգրկված, ընդհանուր թվով, շուրջ 67 հազար սովորողներ:

Նախագծով 13.0 մլն դրամ է նախատեսվել «Համահայկական կրթական խորհրդաժողովի անցկացում» ծրագրի գծով (2013 թվականին նախատեսված չի եղել, նշված խորհրդաժողովն անցկացվում է 2 տարին մեկ): Միաժամանակ, Նախագծով չի նախատեսվել «Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում» ծրագրի գծով 2013 թվականին նախատեսված 710,1 մլն դրամը:

Վերոնշյալներից բացի, ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով զգալի միջոցներ են նախատեսվել կրթական օբյեկտների հիմնանորոգման և շինարարության գծով (10.5 մլրդ դրամ):

Միաժամանակ, կրթության ոլորտում նախատեսվում է շարունակել և իրականացնել արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցներով հետևյալ ծրագիրը.

1. Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Կրթության որակի և համապատասխանության երկրորդ վարկային ծրագիր (ծրագրի տևողությունը՝ 2009-2014թթ.)

Ծրագրի հիմնական նպատակը Հայաստանի կրթական համակարգի զարգացման ուղղորդումն է գիտելիքահեն տնտեսության պահանջները՝ ապահովելով հասարակության սոցիալ-տնտեսական պահանջներին համապատասխան հանրակրթության և բարձրագույն մասնագիտական կրթության որակի աճ: Ծրագրով իրականացվող բարեփոխումները նպատակաուղղված են մի կողմից կրթության որակի շարունակական բարձրացման միջոցով հանրակրթության բնագավառում առկա ձեռքբերումների պահպանմանն ու զարգացմանը՝ ներառելով նաև նախադպրոցական կրթության հիմնախնդիրները, մյուս կողմից՝ աջակցելու բարձրագույն կրթության մատչելիության, որակի և համապատասխանության ապահովման խնդիրների լուծմանը:

Ծրագիրն ավարտվում է, որի համար 2014թ. նախատեսված է 3,492,8 մլն դրամ, այդ թվում, վարկային միջոցներ՝ 2,794,2 մլն դրամ, համաֆինանսավորում՝ 698,6 մլն դրամ:

ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի նախագծով միջոցներ են նախատեսվել նաև մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող մի շարք ծրագրերի գծով, մասնավորապես.

- բարձրագույն մասնագիտական կրթության գնահատման համակարգի բարեփոխումներ՝

140.0 մլն դրամ,

- մասնագիտական կրթության որակի ապահովման ծառայություններ՝ 67.1 մլն դրամ,

- նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒՀ) բարեփոխումներ՝ 166.0 մլն դրամ,

- Հալեպի և Բուխարեստի համալսարաններում հայոց լեզվի դասավանդման կազմակերպում, համապատասխանաբար՝ 4.9 և 3.6 մլն դրամ: 3.6 մլն դրամ էլ նախատեսվել է Ավստրիայի Զալցբուրգի համալսարանում հայագիտության ամբիոնին աջակցման գծով:

- Աջակցություն արտասահմանում սովորող ուսանողներին՝ 100.0 մլն դրամ,

- Հանրակրթական և բարձրագույն ուսումնական հաստատությունների վարկանիշավորում՝ 60.0 մլն դրամ,

- Ներդրումներ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ 10.0 մլն դրամ: Նշված գումարը նախատեսվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության 5 քոլեջների գույքով ապահովման գծով:

Միաժամանակ, Նախագծով 38.0 մլն դրամ է նախատեսվել «Ուսանողներին ուսումնական վարկերի տրամադրում» պետական նպատակային ծրագրի համաֆինանսավորում» նոր ծրագրի գծով:

Նշված ծրագրի հիմնական նպատակը, համաձայն ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 14-ի N270-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության պետական կամ ըստ մասնագիտությունների հավատարմագրված կրթական ծրագրեր ունեցող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների՝ վճարովի համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնառող ուսանողներին աջակցելը և գիտելիքահեն ներուժի զարգացմանը նպաստելն է: Համաձայն ծրագրի, ուսանողներին 12 տոկոս տարեկան դրույքաչափով տրամադրված ուսումնական վարկերից պետության կողմից սուբսիդավորվելու է տոկոսադրույքի 2 տոկոսային կետին համարժեք մասը, իսկ մեկ ուսումնական տարվա արդյունքում առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած բոլոր ուսանողների համար պետության կողմից սուբսիդավորվելու է տոկոսադրույքի 3 տոկոսային կետին համարժեք մասը: